

10280



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան



« 19 » 09 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 188 - 24

Նախաձեռնող՝

«Իմպերատոր գրուպ» ՍՊԸ

Արարատ, Մասիս, 2-րդ թաղամաս, 2. 10, բն. 2

Գործունեությունը՝

Սիփանիկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի  
1-ին և 2-րդ փեղամասերում  
երկրաբանական ուսումնասիրություն  
Արարատի մարզ, Սիփանիկ բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 188 - 24

«19» սեպտեմբեր 2024 թ.

Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերում  
երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝

«Իմպերատոր գրուպ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, Մասիս համայնք  
Սիփանիկ բնակավայր

**Ներածական մաս.** «Իմպերատոր գրուպ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերում (այսուհետ՝ տեղամասեր) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Ուսումնասիրվող տեղամասերը գտնվում են Արարատի մարզի Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի վարչական տարածքում:

**Նկարագրական մաս.** Տեղամասերը տեղակայված են Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում՝ Մասիս համայնքի Սիփանիկ բնակավայրի տարածքում: Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են 4,56 հա մակերեսով տարածքում՝ 1,05 հա՝ 1-ին տեղամասում, 3,51 հա՝ 2-րդ տեղամասում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքները հաշվառված են որպես քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր՝ վարելահող: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սիփանիկի հանքավայրի տեղամասերի տարածքում սահմանված



խախտված/վերականգնված հողեր չեն նշվել, ինչպես նաև պահեստավորված հողաբուսական շերտ չկա:

Սիփանիկի հանքավայրի տեղամասերի տարածքում և հարակից բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Սիփանիկի ԱԿԽ հանքավայրի տեղամասերը ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասերին հարակից տարածքներում:


Հայցվող տարածքն ուսումնասիրվել է, և ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ տարածքում չեն դիտարկվել:

Տեղամասի ծայրակետային կոորդինատներն ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի բերված են ստորև.

1-ին տեղամաս		2-րդ Տեղամաս	
X	Y	X	Y
4439030.601	8444348.653	4438939.625	8444375.565
4439134.609	8444319.227	4438895.997	8444387.744
4439162.236	8444414.355	4438709.741	8444439.333
4439065.511	8444444.199	4438710.792	8444529.086
		4438751.599	8444521.364
		4438859.300	8444496.133
		4438881.320	8444594.540
		4438938.541	8444582.364
		4438995.340	8444564.410

Ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես ճանապարհաշինարարական պաստառահումք և լցանյութ ծանր բետոններում:

Տեղամասերի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ կոպճաավազակավային առաջացումները, Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի վերին չորրորդականի կավային առաջացումները, այլուվիալ ավազակոպճային նստվածքները: Տեղամասերը կապված են Սևջուր և Հրազդան գետերի դարավանդային նստվածքների հետ: Տեղամասերում ավազակոպճային առաջացումները ծածկված են հողաբուսական շերտով, որի միջին հզորությունը 1-ին տեղամասում կազմում է 0,15 մ, իսկ 2-րդ տեղամասում՝ 0,19 մ: Նախնական տվյալներով տեղամասերի օգտակար հանածոյի մարմինը հետախուզվող տարածքում ներկայացված է ավազակոպճային խառնուրդի հորիզոնականին մոտ՝ շերտաձև տեղադրմամբ: Տեղամասերի ավազակոպճային խառնուրդի կուտակը տարածվում է համապատասխանաբար՝ մոտ 108 մ և 262 մ ձգվածությամբ: Նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 4,56 հա տարածքի վրա հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ և անցնել 6,5 մ խորությամբ 15 հետախուզահոր, որից 1-ին տեղամասում՝ 5, իսկ 2-րդում՝ 10: Հետախուզահորերի ընդհանուր մակերեսը կազմում է 90 մ<sup>2</sup>, որից 1-ին տեղամասում՝ 30 մ<sup>2</sup>, 2-րդում՝ 60 մ<sup>2</sup>:



Հետախուզահորերի ծավալը կազմելու է 585 մ<sup>3</sup>, այդ թվում՝ 1-ին տեղամասում 195 մ<sup>3</sup>, (մակաբացման ապարներ՝ 4,5 մ<sup>3</sup>, հողաբուսական շերտ՝ 1,5 մ<sup>3</sup>), 2-րդ տեղամասում՝ 390 մ<sup>3</sup>, (մակաբացման ապարներ 16,2 մ<sup>3</sup>, հողաբուսական շերտ՝ 3,0 մ<sup>3</sup>): Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով: Հետախուզահորերի անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի ծավալային և ծավալալիքային զանգվածներն ու փխրեցման գործակիցը, որի համար նախատեսվում է օգտագործել հետախուզահորերի ընդհանուր ծավալից 60 մ<sup>3</sup>: Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է ԱԿԻ կուտակի հետլցնում ձեռքով:

Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական փորձարկումներ, քիմիական և միներոլոգիկաբուսական ուսումնասիրություններ: Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման:

Սիփանիկ ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տեղամասերի տարածքում ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում հնարավոր են ազդեցություններ մթնոլորտի, հողային և ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Ավազակոպճային կուտակը գտնվում է խոնավ վիճակում, ինչի հետևանքով հայցվող տարածքում հետախուզական փորվածքների անցման, նմուշառման և փաստագրման ժամանակ փոշեգոյացում չի կատարվելու: Փոշեգոյացում կլինի միայն տեղամասերի տարածքին մոտեցնող ճանապարհների վրա, որի ազդեցությունը մեղմացնելու նպատակով պարբերաբար իրականացվելու է ջրցան: Տարածքում առաջացող կեղտաջրերը հավաքվելու են անթափանց բետոնապատ հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության միջոցով՝ պայմանագրային հիմունքերով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հանված հողի բերրի շերտը պահպանվելու է: Այդ նպատակով բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվելու են միջոցներ, որոնք կբացառեն դրա որակական հատկանիշների վատթարացումը: Հողի բերրի շերտն օգտագործվելու է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով:

Աշխատանքներն իրականացնելիս առաջանալու է մոտ 55 դԲա աղմուկ, Սիփանիկ բնակավայրի տարածքում աղմուկի մակարդակը կկազմի մոտ 40 դԲա, ինչը ցածր է բնակելի գոտում աղմուկի թույլատրելի մակարդակից (45 դԲԱ):

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում՝ շաբաթական մեկ անգամ,

2. տեղամասերում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում տարեկան մեկ անգամ,

3. աղմուկի մակարդակի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ,

4. տեղամասերի տարածքի հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամսական մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան նախատեսվում է հատկացնել 857.000 ՀՀ դրամ:



Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ առաջանալու դեպքում իրականացվելու են լրացուցիչ միջոցառումներ (ըստ իրավիճակի)՝ ավելացվելու է կատարվելիք ջրցանը, կրճատվելու է աշխատանքի տևողությունը և այլն:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության գործընթացում Օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Սիփանիկ) իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացմանը: Հանրային քննարկման ընթացքում նախաձեռնողը պարտավորվել է ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում աշխատակիցներ ներգրավել համայնքից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին և հատկացնել նախատեսված սոցիալական վճարները: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական միջոցների սպասարկումը և վառելիքի ձեռքբերումը կատարվելու է ազդակիր Մասիս համայնքի մասնագիտացված ընկերություններում, ինչը կապահովի լրացուցիչ եկամուտներ: Ազդակիր համայնքի հետ քննարկվել է սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում օժանդակության ծրագրերի իրականացումը (մասնավորապես՝ ֆինանսական աջակցություն կրթական-մշակութային հաստատություններին):


Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,
- շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով ֆիլտրերի տեղադրում,
- շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և ձայնախլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,
- տեղամասերին մոտեցնող ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակին, տարածքի խոնավացում՝ փոշեգոյացումը բացառելու նպատակով,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո,
- աշխատանքների իրականացման ընթացքում նախաձեռնվելու են միջոցառումներ՝ ուղղված բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանությանը:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:



## Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել հայտում նկարագրված կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,

2. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն և 72-Ն որոշումների պահանջներով՝ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների պահպանության նպատակով, և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով,

3. Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներով՝ իրականացնելով շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ,

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով,

5. ապահովելով հայտում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Իմպերատոր գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ-ի հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան